ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

25.05.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 399-Ա

«ՍԿ ԳԱԶ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 161-Ն որոշումը և «ՍԿ ԳԱԶ» ՍՊԸ-Ի տնօրեն Էրիկ Համբարձումյանի (ՀՎՀՀ 09210931) սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.«ՍԿ ԳԱԶ» ՍՊԸ-ի տնօրեն Էրիկ Համբարձումյանի կողմից 2023 թվականի համար ներկայացված ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի «Շինուհայրի խաչմերուկ» թիվ 3Ա հասցեում գտնվող գազալցակայանում սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու համար տալ թույլտվություն:

2. Հանձնարարարել աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն սահմանված տուրքը վճարելուց հետո:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2023/25/05
Ք.Գորիս